

պոլիտի և Պոլիսրոնիոսի մեկնութիւնները եզեկիէլի, համաձայնում է կամ հակաճառում. բայց այստեղ ևս համեմատութիւնը պարզում է, որ այդ հատուածներն իրենց հեղինակների անուններով առել է Ստեփանոս Սիւնեցուց (\*): Ընդհակառակ երբեմն լուում է այն պիտի աղբիւրների մասին, որ անպայման ձեռքի տակ է ունեցել, որոնց մտքերն ու բառամթերքը, նաև բառացի խօսքերը գործադրել է իւր մեկնութեան մէջ, օրինակ Որոգինէսի «ի տեսութիւն եզեկիէլի» հատուածը (\*\*), միանգամայն տարբեր նոյն հեղինակի քիչ վերև յիշուած մեկնութիւնից կամ թանգագին քարերի խորհրդաւոր նշանակութեան մեկնութիւնը (եզ. ԻԸ. 13), որ առել է Վարդանի արարածոց մեկնութիւնից, իսկ Վարդանը համառօտել է Եպիփանից (\*\*\*):

(\*) Օրիգինէս կամ Որոգինէս հին հայերէնի տառադարձութեամբ, ծնուած է 185 թուին Գ. Յ. և վախճանուած 254 թուին. աչակերտել է Աղէքսանդրիայի քրիստոնէական դրոյրոցի նշանաւոր ուսուցիչներին՝ Պանտենուսին և Կղէմէս Աղէքսանդրացուն. ապա փիլիսոփայութեան մէջ Ամոնիոս Սակկասին: Եղել է Կղեմեսից յետոյ Աղէքսանդրիայի դրոյրի տեսուչը և իւր բազմաթիւ գրուածքներով ժամանակի մեծագոյն գիտնականի հռչակը վայելել: Նորա աշխատութիւններից շատերը թարգմանուած էին և հայերէն (տ. Արարատ, 1917, 196), որոնց մէջ նաև եզեկիէլի մեկնութիւնը, որից վկայութիւն է բերում Սիւնեցիի հեղինակի անուան յիշատակութեամբ: Եզեկիէլի մեկնութիւնը բաղկացած էր 25 գրքից, որից միայն մի փոքրիկ հատուած է հասել յունարէն (Harnack. Gesch. der altchrist. Litt. 1893, 364):

Հիպոլիտ Հոսմայեցիին երէց և հակաթոռ Կալիստոսի (218-222), նշանաւոր մատենագիր Բ. դարի վերջում և Գ. ի առաջին քառորդին, բազմաթիւ կարևոր գրուածքներ ունի, շատերը կորած կամ հատուածներով միայն հասած: Նորա Εἰσαγωγή τοῦ Ἱεζεκιηλ ἀմբողջական աշխատութիւն չէր եզեկիէլին նուիրուած (Bardenhever. Gesch. der altchrist. Litt. Bd. 2, Եր. 532) մասնաւոր է անում նորա մի ուրիշ աշխատութիւնը (Wrightի Բրիտ. Թանգ. Ցուց. Եր. 102. Cod. Brit. Mus. Syr. 862), տաճարի մասին Harnack. Gesch. der altchrist. Litt. 605, 639. Die Chronologie 2. Bd. 1904, 248; Ստեփանոս Սիւնեցիին այս երկուսից մէկն ու մէկը, հաւանօրէն, ի նկատի է ունեցել:

Պոլիսրոնիոս Ապամէացիին Թէոդոր Մոպսուեստացու եղբայրն էր, որի մասին շատ համառօտ, բայց զովասանքով է խօսում Թէոդորեալ իւր պատմութեան մէջ (Hist. eccl. 5, 39). նա մեռած պիտի լինի 428-431 թ. թ.: Գրել է Հին Կտակարանի շատ գրքերի մեկնութիւններ, որոնցից միայն հատուածներ են հասել. յիշուած են յատկապէս, Դանիէլի և եզեկիէլի մեկնութիւնները, սրանց վերայ պէտք է աւելացնել և Յովբի մեկնութիւնը. (Bardenhever. Bd. III. 1912, 323):

(\*\*) Զեռ. Էջմ. N° 1650/1879, 136բ., Արարատ, 1895:

(\*\*\*) Եպիփան Սալամինացիին կամ Կիպրացիին ծնուած է Դ. դարի առաջին քառորդին և վախճանուած 403 թուին: Եգիպտոսում իւր ուսումը աւարտելուց յետոյ՝ արեղայ է ձեռնադրուում Հրէաստանի Էլէյթերոպոլիս քաղաքում, իսկ 367 թ. Սալամինայի եպիսկոպոս ընտրուում: Նուիրապետական եռանդուն գործունէութեան հետ, ընդարձակ է նաև գրականը, որպէս բազմաճառ և շատ լեզուների տիրապետող. նա ներկայացուցիչն է ժամանակի աւանդական վարդապետութեան: Նորա երկերից շատերն են հայերէն թարգմանուած, բայց ձեռագրական վիճակի մէջ զեռ ևս, բացա-

Բայց նա ձեռքի տակ է ունեցել քարերի մասին եւ ուրիշ աղբիւրներ Եպիփանից տարբեր բացատրութիւններով. օրինակ չափուղայի մասին Նչեցի ունի էլի երեք բացատրութիւն, որոնցից մէկը նոյնանում է Անդրէաս Կապադովկացու Յովհաննու Յայտնութեան (Յայտ. ԻԱ. 19-20) մեկնութեան հետ, Լամբրոնացու թարգմանութեամբ (\*):

Նչեցի Զեռ. Էջմ. N° 797 նժ. 199բ. «Այս քար նման է երկնային աւգոյն, զոր ասնն զոլ կապուտակ զունով, որպէս զլազուարդ» = Անդր. Յովհ. Մեկն. Զեռ. Էջմ. N° 569, 239բ. - 240ա.:

Բայց Անդրիասի մեկնութեան թարգմանութեան մէջ ևս, ընդհանուր առմամբ, քարերի բացատրութեան աղբիւր Եպիփանն է ցոյց տուած (\*\*), և համեմատութիւնն էլ հաստատում է այդ իրողութիւնը. բայց մէջ բերուած կտորը չկարողացանք գտնել Եպիփանի աշխատութեան հայերէն թարգմանութեան մէջ, եթէ մեր ձեռքի տակ եղած միակ ձեռագիրը աղճատուած չէ կամ յունարէն քաղուածքի թարգմանութիւնը չէ: Յամենայն դէպս հաւանական է Նչեցու տարբեր աղբիւրներից օգտուելու խնդիրը (\*\*\*), քանի որ իրօք կային թանգագին քարերի մասին և այլ աշխատութիւններ: Դաւթի «Սահմանք իմաստասիրութեան» երկից կամ Արիստոտէլի թարգմանութիւններից օգտուում է մի քանի տեղ, մի անգամ միայն յիշելով նրանց անունը. օգտուում է քիչ չափով նաև Գոռ Միսիթարի Երեմիայի մեկնութիւնից, ինչպէս և Վարդանի փոքրիկ հատուածից եզեկիէլի չորեքկերպեան-

ուութեամբ «Ընդդէմ հերձուածողաց» տետրակի, որ նորա նշանաւոր Παράρτησιν երկի ցանկն է, հրատարակել է Գալուստ Տէր Միկրտչեան, Արարատ:

Չի տպագրուած նաև նորա Περὶ τῶν ἱερῶν λιθῶν, որպէս բացատրութիւն Ել. ԻԸ. 17-20 և ԻԹ. 10-14 համարների, որի յունարէնը քաղուածօրէն է միայն հասել, համեմատաբար լրիւ լատինական թարգմանութիւնը, բայց այն էլ վերջում եղձուած. Bardenhever. Gesch. der altchrist. Litt. III. 1912, 293: Վերջին աշխատութեան մասին նաև K. P. Patkinov, Dragotrennyi Kamni, 1879, S. P.:

(\*) Լամբրոնացիին այս աշխատութիւնը թարգմանել է 1179 թուին. Զեռ. Էջմ. Գց. N° 187, 344ա: Տպագրուած է թարգմանութեան յիշատակարանը Արարատ, 1900, Եր. 211, Տաշեան, Մայր Ցուց., 283: Ալիշան, Հայագատում, 427:

(\*\*) Զեռ. Էջմ. N° 569 նժ. 240բ. «Այս ի սրբոյն Եպիփանէ վս. քարանցս ասացեալ էր, զոր քն. Նահապետացն իլի. յարմարեաց»:

(\*\*\*) Վանականը իւր Յովբի մեկնութեան մէջ, N° 778 նժ., 157ա. օգտուել է նոյնպէս Եպիփանից, «Վանի ակն, որ գտանի ի հնդիկս, ի միջին այլ ունի շարժուն. զայն բերեալ ի բոյնն (անգղ), զնէ ընդ իւր. և ի շարժել ականն ի մէջ վանակին (Ձեռագիրը Վանակակին), ծնանի անգղ, անդուստ յղացեալ»:. բայց նա ունի այնպիսի բացատրութիւն, որ պակասում է Եպիփանի մէջ, 79բ.: Տես և N. Marr, Sbornik Priteht Vardana, 1889, 425: Դաւրիժեցի, Վաղարշապատ, 1896, 586 և շար.: